

գիտական ենթադրություն: Խաղերի պրորիւմի վերջնական լուծումը անշուշտ կպահանջի հետագա քրոնոսայան հետազոտություններ: Սակայն Աթալանի ուսումնասիրությանը ուշադիր ծանո-

թանալը թույլ է տալիս մտածելու, որ հեղինակը իրոք գտել է դեպի խաղերի ընթերցումը տանող հանապարհի հետքերը:

Մ. ԲՐՈՒՏՅԱՆ

ياقوت الرومى معجم البلدان مجلد ٥-١ دارصادر بيروت ١٩٥٥-١٩٥٧
ՅԱԿՈՒՏ ԷԼ-ՌՈՒՄԻ, Աշխարհագրական բառարան, հատորներ 1-5,
Սադեր հրատարակչություն, Բեյրութ, 1955-1957:

1955-1957 թթ. Բեյրութում Սադեր հրատարակչությունը հինգ սովոր հատորներով լույս է բնծայել միջնադարյան արաբ աշխարհագիր Յակուտ էլ-Ռումիի Աշխարհագրական բառարանը (Մոռզամ ալ-Բուլղան), որն իրավացիորեն համարվում է արաբական հարուստ գրականության ուշագրավ գործերից մեկը²:

Մոտ հարյուր տարվա ժամանակամիջոցում այդ բառարանն արժանացել է երեք տպագրության (առաջին անգամ 1866-1870 թթ. Լայպցիգում, երկրորդ անգամ՝ 1906 թ. Կահիրեում) և միշտ էլ մնացել է Կովկասի ու Անդրկովկասի ժողովուրդների պատմությունը հետազոտող գիտնականների ուշադրության կենտրոնում: Պատմական այդ մեծարժեք աշխատությունից օգտվելով՝ արևելագետ Ֆրենկ պատրաստել է մի շարք գործեր հին ուսուների, բաշկիրների, խաղարների և Վոլգայի բուլղարների

մասին: Մի ուրիշ արևելագետ՝ Ֆ. Բ. Շարմուան նույնպես օգտագործել է այն՝ հին սլավոնների մասին իր հանրահայտ աշխատությունը շարադրելու համար:

Աշխարհագրական բառարանը յուրաքանչյուր տեղանվան հետ կապված բազմակողմանի տեղեկությունների մի շտեմարան է, որը լույս է սփռում միջին դարերի աշխարհագրական, պատմական, ազգագրական մշտնջատ շատ հարցերի վրա: Նա տալիս է յուրաքանչյուր տեղանվան ստուգաբանությունը, ճշգրիտ հնչյունական կողմը, նկարագրում է յուրաքանչյուր երկրի կամ քաղաքի աշխարհագրական դիրքը, սահմանները, բնությունը, բերքերը և այլն, ճշտում է, թե գլխավոր քաղաքների միջև ինչ տարածություններ կային և որքան ժամանակ էր հարկավոր մի տեղից մյուսը գնալու համար: Այնուհետև նա պատմում է, թե այդ վայրերը ե՞րբ և ո՞ւմ ձևափոխ են վերցրել արարները, դրանցում ապրող ժողովուրդներն ի՞նչ կապեր են ունեցել և ունեն հարևան ժողովուրդների հետ, ի՞նչ արտադրությամբ են հայտնի և ի՞նչ ակնառու դեմքեր են տվել իսլամական կուլտուրային:

Աշխարհագրական բառարանում Յակուտ էլ-Ռումին օգտագործել է բազմատեսակ աղբյուրներ: Կարևոր են IX-X դարերում արաբ աշխարհագիրների դեպի Կովկաս կատարած ճանապարհորդությունների նկարագրությունները: Այդ կարգի գործերից ընդարձակ քաղվածքներ կատարելով, Յակուտ էլ-Ռումին փրկել է կորստից մի շարք մեծարժեք վավերագրեր, որոնք

¹ Յակուտ էլ-Ռումին ծնվել է Բյուղան-գիայում (Բիլսոդ էր-Ռում), 1172 թ.: Մանուկ հասակում իր հայրենի երկրից գերի տարվելով, Միջագետքում վաճառվել է մի բաղադրի վաճառականի: Տիրոջ մահից հետո նա սկսել է զբաղվել գրքի առևտրով: 1216 թ. Մերվում նա ձեռնարկել է Աշխարհագրական բառարանը կազմելուն: 1218-1219 թթ. Մերվի հարուստ զբաղարաններում նյութեր հավաքելուց հետո անցել է Քորեզմ՝ նույն աշխատանքը շարունակելու համար: Նույն նպատակով նա այցելել է Մոսուլ (1220-1222), Հալեպ (1222-1224), Կահիրե (1224-1228): 1229 թ., երբ արդեն լրիվ ավարտել էր Աշխարհագրական բառարանը, Յակուտ էլ-Ռումին վախճանվել է Հալեպում:

² Յակուտի բառարանի այն մասերը, որոնք կապված են հայ ժողովրդի և նրա հարևան ժողովուրդների պատմության հետ, առաջին անգամ ամբողջությամբ թարգմանել է հանգուցյալ պատմաբան Հ. Նալբանդյանը: Այդ թարգմանությունը գեղեսու մնում է ձեռագիր վիճակում:

¹ Ահա մի երկու նմուշ. Խաղարների Իթիլ քաղաքից Բար էլ-Աբվար 12 օրվա ճանապարհ էր, Բար էլ-Աբվարից Սամանդար՝ 4 օրվա, Սամանդարից Սերիբի երկիրը՝ 2 փարսախ, Սարավայից Արդարիլ՝ 2 օրվա, Արդարիլից Թավրիզ՝ 7 օրվա, Թավրիզից Մարանդ՝ 2 օրվա, Ուրմիայից Սալմաստ՝ 2 օրվա, Սալմաստից Թավրիզ՝ 3 օրվա, Սիսականից Իվին՝ 16 փարսախ և այլն:

սերտորեն առնչվում են Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդների պատմությանը:

Հայտնի է, որ VII դարից արարները շփման մեջ էին խազարների հետ, որոնք հետադաշում դարձան ուսական առաջին պետության ամենամոտիկ հարևանը: 868 թ. իսլամական կրոնին հարելով, խազարները դեպի հյուսիս՝ ուսական տափաստանները, ազատ ու անվտանգ երթևեկության պայմաններ ստեղծեցին արար աշխարհագիրների համար: X դարի սկզբում իսլամական կրոնն ամրապնդելու նպատակով, Մուկտագիր խալիֆան Սաուսեն էր-Ռեսսի գլխավորությամբ մի դեսպանություն է ուղարկում Վուզայի բուլղարների մոտ: Այդ դեսպանության տեղեկագիրը, որը գրի է առել Ահմեդ իրն Ֆադլանը 921—922 թթ., ամբողջությամբ պահպանվել է Յակուտ էլ-Ռումիի Աշխարհագրական բառարանում: Նույն ժամանակաշրջանում էլ-Իսթահրի աշխարհագիրն այցելել է խազարների և բուլղարների երկրները: 945 թ. իրն Հաուկալ աշխարհագիրը եղել է Միջագետքում, Անդրկովկասում, Կովկասում և մի շարք այլ երկրներում: Քիչ ավելի ուշ իրն Հաուկալի հետքերով Կովկաս է եկել հուշակավոր աշխարհագիր Մասուդին:

Օղտագործելով այդ և մի շարք ուրիշ աշխարհագիրների դործերը, որոնցից շատերը, ինչպես հայտնի է, անհետ կորել են¹, Յակուտ էլ-Ռումին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Կովկասի և Անդրկովկասի բազմատեսակ ժողովուրդների ու ցեղերի, նրանց հոգևոր ու նյութական մշակույթի, բարեկամական կապերի ու պատերազմների և այլ հարցերի մասին: Պակաս արժեքավոր չեն նաև Յակուտի հաղորդումները տարրեր ժամանակ Կովկասում և Անդրկովկասում բնակություն հաստատած արարական ցեղերի մասին:

Յակուտ էլ-Ռումին մանրամասնորեն խոսում է Հայաստանի և հայ ժողովրդի մասին: Հայտնի է, որ արարական ընդարձակ կայսրության մեջ Հայաստանը հանդես է դալիս Ատրոպատականի և Առանի հետ միացած: Անկասկած, այդ միաձուլումը կատարվել էր վարչական նկատառումներով: Թեև այդ երկրներից յուրաքանչյուրը կառավարվում էր առանձին ոստիկանների կողմից, սակայն դրանց իշխանությունը հաճախ միացվում էր ի դեմս մի

¹ Յակուտ էլ-Ռումին քաղվածքներ կատարելով օղտագործել է նաև մի շարք ուրիշ աղբյուրներ՝ իրն Վադիհ Իսպահանի, Ահմեդ իրն Յահյա, Միսաար Մուհեյիլ, Իմին Վասուֆ, իրն էլ-Թալիբ, էլ-Մուհեյլի, Աբու-Աուև և ուրիշների դործերը, որոնք, սակայն, մեղ չեն հասել:

անձի: Այդ պատճառով շատ աշխարհագիրներ ամբողջ արարական Անդրկովկասն ամփոփում էին Արմինիա անվան մեջ:

Հստ Յակուտ էլ-Ռումիի հաղորդման, Արմինիայի արևմտյան սահմանը ձգվում էր Քալիբալա (էրզրում) քաղաքից մինչև Կովկասյան լեռները: Հյուսիսային սահմանագիծը Կովկասյան լեռնաշղթան էր, որ վերջանում էր խազարների (Կասպից) ծովի ափին, թողնելով այնտեղ մի նեղ անցք, ուր և կառուցված էր Բար էլ-Արվար (Գերբենգ) բերդաքաղաքը: Արևելյան սահմանագիծը կազմում էր Ար-Ռասս (Արաքս) գետը, իսկ հարավում Արմինիան ձգվում էր մինչև Միջագետք:

Արմինիայի ազգաբնակչության մասին Յակուտ էլ-Ռումին հաղորդում է մի քանի տարտամ թվական տվյալներ, որոնք, սակայն, չափազանց արժեքավոր են, եթե նկատի ունենանք այդ ժամանակվա վիճակագրական տեղեկությունների կատարյալ բացակայությունը: Հիմնվելով «երկար տարիներ» Անդրկովկասում ապրած իրն Վադիհ Իսպահանի տեղեկությունների վրա, Յակուտ էլ-Ռումին ասում է, որ «Արմինիայում կան 118 իշխանություններ, դրանցից միայն Սահիր էս-Սերիրի երկիրն ունի 18,000 գյուղամյուս իշխանություններից յուրաքանչյուրն ունի 4.000-ից ավելի կամ քիչ պակաս թվով գյուղեր»:

Յակուտ էլ-Ռումիի մի շարք տեղեկություններից կարելի է հետևել, որ հայ ժողովուրդը տարածվել էր ոչ միայն բուն Հայաստանում, այլև Առանում: Հիմնվելով իրն էլ-Ֆակիհի և էլ-Իելագորի պատումների վրա, Յակուտ էլ-Ռումին հիշատակում է Սավերտին (Սևորդիք) անունով մի հայկական ցեղ, որը ապրում էր Բերդաա և Շամքոր քաղաքներից այն կողմը: Քաջի այդ, Յակուտ էլ-Ռումին հիշատակում է նաև Սիսիցի կամ Սայսաջան անունով մի այլ հայ ցեղ, որը նույնպես տարածվել էր Առանում, մի հանգամանք, որ լիովին համապատասխանում է հայկական ավանդություններին: Ավելիացնենք և այն, որ արար հեղինակների լավատեղյակությունն այս հարցում հաստատում են և ուրիշ աղբյուրներ (հունական և վրացական), որոնք, ինչպես հայտնի է, տալիս են հետաքրքրական տեղեկություններ ի հաստատումն այն տեսակետի, որը հայերին տանում է դեպի Կովկասյան լեռները:

Յակուտ էլ-Ռումին հիշատակում է Դարիլը (Դվին)՝ իբրև Հայաստանի մայրաքաղաք՝ շրջապատված պարսիկներով և օժտված անմատչելի ամրություններով, ինչպես նաև հայոց աշ-

¹ Աշխարհագրական բառարան, 1 հատ. էջ 161:

խարհի հետևյալ քաղաքները՝ Քալիբալա, Արգան (Արծն), Բերկերի (Բերկրի), Բիթլիս (Բաղնշ), Մայաֆարիկին կամ Մուֆարդեն (Նիբրիկերտ), Խիլաթ, (Խլաթ), Արջիշ (Արճեշ), Երզանջան (Երզնկա), Խարթ Բիրգ (Խարբերգ) և այլն: Այս քաղաքները, որոնք նախկինում ծաղկած վիճակում էին գտնվում, XIII դարում արդեն աղքատացել էին ու ավերվել: Յակուտ էլ-Ռումին գրվատանքով խոսում Հայաստանի մի շարք քաղաքների մասին: Նա առանձնապես գովաբանում է Երզանջանը (Երզնկա), որը նրա խոսքերով «սիրուն, նշանավոր, հաճոյալի, ճոխ և բազմամարդ» քաղաք է եղել՝ «վաճառաշահ ու ծաղկյալ» Խլաթ քաղաքն «ունի բազմազան համեղ պտուղներ և առատ ջուր»², իսկ Արծն նշանավոր բերդաքաղաքը, որ «առաջ Հայաստանի ամենաբարգավաճ քաղաքներից մեկն էր... ներկայումս սկսել է ավերակ դառնալ»³:

Յակուտ էլ-Ռումին Հայաստանի լեռներից ծանոթ է էլ-Հարիսին և էլ-Հուվայրասին (Մեծ ու Փոքր Մասիսներ), իսկ դետերից՝ Ար-Ռասսին (Արարս), էլ-Կուրին (Կուր), էլ-Ֆուրաթին (Նիբրատ), էլ-Դիջլային (Տիգրիս): Վանա լճի մասին նա ասում է. «Մի աննման լիճ է, որի թառիխ (տառեխ) կոչված նշանավոր ձուկը արտածվում է մինչև Բալխ և Ղազնա Խորասան»⁴, Ինչ վերաբերում է Արագածին ու Սևանին, ապա սրանց մասին ոչ մի հիշատակություն չենք գտնում ոչ միայն Յակուտի, այլև բնահանրապես ամբողջ արաբական հարուստ գրականության մեջ:

Խոսելով Առանի մասին, Յակուտ էլ-Ռումին գրում է. «Առանը Արմինիայի նահանգներից մեկն է»⁵, որի մայրաքաղաքն է Բերդաան: «Րարում և Խորասանում Ռեյից ու Սպահանից հետո, չկա ավելի նշանավոր, ավելի ծաղկած և իր դիրքով ու բերքերով ավելի գեղեցիկ քաղաք, քան Բերդաան»⁶: Միաժամանակ այդ քաղաքը խոշոր առևտրական կենտրոն էր: Բերդաայում պատրաստված մետաքսե գործվածքներն արտածվում էին մինչև Խուստան: «Բերդաայի այն դռան մոտ, որ կոչվում է «Քրդերի դուռ», գտնվում է մի շուկա, որի անունն է Ալ-Կուրակի: Այդտեղ ամեն կիրակի օր մեծ տոնավաճառ է լինում, ուր դալիս են վաճառականներ նույնիսկ Իրաքից»⁷: Յակուտ էլ-Ռումիի ապրած

ժամանակաշրջանում Բերդաան արդեն սկսել էր «անշքանալ, ավերակ դառնալ»:

Բացի Բերդաայից, Առանում կային մի շարք նշանավոր քաղաքներ: Դրանցից առավել կարևորներն էին Բաքու, Շամախիա, Շամքոր, Քանջա (Գանձակ), Շարուան կամ Շիրվան: Վերջինում գոյություն ունեցող առանձին թագավորություն: Շիրվանից «հարյուր փարսախ հեռու» էր գտնվում Բաք էլ-Աբվաբը, հին աշխարհի ամենահռչակավոր վայրերից մեկը, որը բացի առևտրական կարևորությունից, ուներ նաև ռազմական խոշոր նշանակություն: Ժայռի ու կապարի սգտագործումով կառուցված ամրությունները ձգվում էին մինչև ծովը, արգելելով թշնամիների մուտքը: Պարսպի լայնությունն այնքան էր, որ, րստ իրն էլ-Ֆակիհի, դրա վրայով կարող էր մի շարքով գնալ քսան ձիավոր: Այդ շափագանցությունը Յակուտ էլ-Ռումին ավելացնում է մեկ ուրիշը. «էլ-Ջիար լեռան կատարին ամեն տարի փայտ են դիզում...: Երբ թշնամին պատրաստվում է հարձակում գործելու, մեծ խարույկներ են վառում Առանի, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին զգուշացնելու համար»⁸:

Յակուտ էլ-Ռումին Ատրպատականի մասին հաղորդում է մեծ մասամբ ականատեսի վկայություններ: Խորասան գնալիս նա 1220—1221 թթ. այցելել է Ուրմիա, որը «բերրի, պտղառատ, ջրառատ այգիներով մի քաղաք էր»⁹: Եղել է նաև Արդաբիլում, որտեղ և տեսել է «փայտե սնակների ու ափսեների» բազմաթիվ արհեստանոցներ:

Աշխարհագրական բառարանում տեղեկություն կա Հայաստանի վրա կատարված արաբական արշավանքների մասին: Ըստ Յակուտ էլ-Ռումիի, Հաբիբ իբն Մեսլեմե արաբ զորավարը «Հայաստանի առաջին արշավանք» է կոչում Սիսիջի կամ Սայսաջան (հայոց Սիսական անվան արաբական ձևերը) քաղաքի գրավումը¹⁰. այդ քաղաքի բնակիչները գլխահարկ վճարելու հանձնառությամբ հաշտություն էին կնքել արաբների հետ: Պետք է նշել, սակայն, որ հայ պատմիչներին ծանոթ է սիսիական ցեղը. իսկ այդ անունով քաղաքի գոյության մասին մենք իմանում ենք միայն արաբ աշխարհագիրներից: Յակուտ էլ-Ռումին ճշտում է նույնիսկ այդ քաղաքի տեղագրումը՝ «Եվրոպից 16 փարսախ հեռու», որը ցույց է տալիս Արցախ-Սյունիք ճանապարհի ուղղությունը: Աշխարհա-

¹ Աշխարհագրական բառարան, I հատ., էջ 150:

² Նույն տեղում, II հատ., էջ 380:

³ Նույն տեղում, I հատ., էջ 150:

⁴ Նույն տեղում, II հատ., էջ 381:

⁵ Նույն տեղում, I հատ., էջ 136:

⁶ Նույն տեղում, էջ 379:

⁷ Նույն տեղում, էջ 379—380:

¹ Աշխարհագրական բառարան, I հատ., էջ 303:

² Նույն տեղում, էջ 159:

³ Նույն տեղում, էջ 143:

⁴ Նույն տեղում, III հատ., էջ 297:

գրական բառարանի մի շարք տեղեկություններին հետևում է նաև, որ արարները Հայաստանի վրա արշավանքներ էին կատարել նախնական ժամանակաշրջանում ևս: Արարական ավանդության համաձայն այլևհր Քայիֆից (Հեջագ) Առան փոխադրեց էլ-Հարիս և էլ-Հուվարաս լեռները և դրանց ներքո թաղեց Ար-Ռասս գետի ժողովրդին¹: Հավանաբար այդ առասպելը սկիզբ է առել այն միևնույն իրողությունից, որը արձագանք է գտել նաև իսլամական դուրանի Սուրետ էլ-Ֆուրկանի 38-րդ այնգում, այնտեղ ասված է. «Բնաջինջ (արեցինք) Ադ ու Սեմուդ (ցեղերը) և Ար-Ռասս գետի մարդկանց և նրանց մեջտեղ շատ սերունդներ»: Ար-Ռասսի դաշտային մասում հիշատակվում են «հազար կործանված գյուղեր», որոնց «ավերված պատերը» դեռևս մնում էին Յակուտ էլ-Քումիի ապրած ժամանակաշրջանում²:

Հայտնի է, որ արարներն իսլամության հարելուց առաջ էլ հաճախ արշավում էին դեպի հյուսիս: Հիմնվելով Համամ էլ-Սելուլիի վկայության վրա, Յակուտ էլ-Ռումին ասում է. «Նախնական ժամանակներում Կուդաա անունով արարական մի ցեղ տարածվեց ամեն կողմ»³: Այդ ցեղի մի ճյուղը, որ բնակություն էր հաստատել Միջագետքում, բնաջինջվեց պարսիկների Շապուհ թագավորի կողմից, հավանաբար V դարում: Այդպիսի ցեղերը հասնում էին նաև մինչև Անդրկովկաս, որտեղ և ծառայության էին մտնում պարսկական բանակը: Յակուտ էլ-Ռումին հիշատակում է այդ ժողովուրդներից մեկին: Նա ասում է, որ պարսից թագավորն «Առանում հաստատել տվեց... նաև Դուդանի կոչված

ժողովրդի դուռը, մի ժողովուրդ, որ արարական ծագում ունի»¹: Արարական տիրապետության ժամանակաշրջանում արար տարրը Հայաստանի քաղաքներում աստիճանաբար զորեղացել էր, տարածվել Կովկասյան լեռների քաղաքներում և գյուղերում, դարձել տիրող խավ, որ վայելում էր անսահման իրավասություններ: Սակայն այդ նույն տիրապետության թուլացմանը զուգահեռ՝ նա իր դիրքերը զիջեց ոչ-արար մեծամասնությանը, որ կաղմում էր բուն ժողովուրդը:

Յակուտ էլ-Ռումին բնահանրապես ստուգաբան հեղինակ է, ու տարբերություն մյուս արար աշխարհագիրների, նա ոչ միայն հիշատակում է իր օգտագործած աղբյուրները, այլև դրանց նկատմամբ բնահանուր առմամբ ցուցաբերում բնադատական մոտեցում: Ծիշտ եզրակացությունների հանգելու ձգտումով նա հաճախ համեմատում է միևնույն հարցի շուրջը գոյություն ունեցող մեկից ավելի տվյալներ: Շատ դեպքերում էլ պարզապես թելադրում է, թե որրանով կարելի է հավատալ այս կամ այն տեղեկության վավերականությանը:

Յակուտ էլ-Ռումիի աշխարհայացքի վրա միջնադարյան մետաֆիզիկայի թողած անջնջելի դրոշմը զգալի չափով վնասում է նրա դատողությունների օրյեկտիվությանը: Մուհամմեդի տրադիցիաներին հավատարիմ մնալու բացորոշ նպատակով նա հաճախ շեղվում է առաջադրած նյութից և ջատագովում աստվածային օրենքներն ու կրոնական կանոնները, թեպետ և ոչ միշտ է փորձում գերբնական ուժերի ներդրածությամբ բացատրել կյանքի և բնության երեվելյթները:

2. ԹՈՓՈՒԶՅԱՆ

¹ Աշխարհագրական բառարան, 111 հատ., էջ 41:
² Նույն տեղում:
³ Նույն տեղում, 11 հատ., էջ 134-135:

¹ Աշխարհագրական բառարան, 1 հատ., էջ 161: